## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 օգոստոսի 2026 թվականի № 311-Ա**

### ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Անահիտ Ավետիսյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 3-ի № 25 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Ջրվունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անահիտ Ավետիսյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ հինգ աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 10-ից 14-ը ներառյալ:

2. ***Անահիտ Ավետիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Ջրվունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Ռուզաննա Բաղդասարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)** — Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 4**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 օգոստոսի 2026 թվականի № 312-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ, ԾԱՂԿԱՁՈՐ ԵՎ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.2-րդ մասերի, 127-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի № 67-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ***Հրազդան, Ծաղկաձոր*** և ***Գառնի*** համայնքներում ***2026 թվականի հոկտեմբերի 25-ին*** նշանակել և անցկացնել համայնքների ավագանիների համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Հրազդան, Ծաղկաձոր* և *Գառնի* համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի վրա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 4**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2026 թվականի № 313-Ա**

## ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Անահիտ Ավետիսյանի* 2026 թվականի օգոստոսի 3-ի № 25 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անահիտ Ավետիսյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ հինգ օր՝ 2026 թվականի օգոստոսի 15-ից 19-ը ներառյալ:

2. ***Անահիտ Ավետիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Ռուզաննա Բաղդասարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 5**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2026 թվականի № 314-Ա**

## ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի մարտի 18-ի № 99-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2026 թվականի օգոստոսի 5-ի № Ե-5306 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյանին*** և մարզպետի խորհրդական ***Մհեր Գևորգյանին*** 2026 թվականի օգոստոսի 6-ին, մեկ օրով գործուղել քաղաք Աբովյան՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 5**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**7 օգոստոսի 2026 թվականի № 315-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի № 514-Լ որոշման հավելվածի 25-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի աջակցության ծրագրով պարարտանյութ ստացած համայնքներում փաստաթղթերի ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Կարեն Բունիաթյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

2) ***Հարություն Խաչատրյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

3) ***Ռուզան Մարտիրոսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանպապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

4) Համապատասխան համայնքի ներկայացուցիչ - *(համաձայնությամբ)*, մոնիթորինգն իրականացնելիս:

2. Աշխատանքային խմբին՝ մոնիթորինգն իրականացնել *2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը* ներառյալ, մարզի՝ Հրազդան, Ծաղկաձոր, Չարենցավան, Աբովյան, Նաիրի, Նոր Հաճըն, Ակունք, Գառնի և Ջրվեժ համայնքներում:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ *Արմեն Հակոբյանի* վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)** — **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 7**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**7 օգոստոսի 2026 թվականի № 316-Ա**

## ՄԱՐԻՆԵ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի հուլիսի 28-ի № 304-Ա որոշումը, *Մարինե Արզումանյանի* 2026 թվականի օգոստոսի 5-ի № 84 դիմումը՝ **հրամայում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Մարինե Արզումանյանին*** տրամադրել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ՝ 2026 թվականի օգոստոսի 12-ից 2027 թվականի մարտի 24-ը ներառյալ:

2. ***Մարինե Արզումանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության տնօրենի տեղակալ ***Անահիտ Բաղալյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 7**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 օգոստոսի 2026 թվականի № 317-Ա**

## ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Անահիտ Բադալյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 3-ի № 82 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները իրականացնող ***Անահիտ Բադալյանին*** տրամադրել 2026-2027 թվականներիի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 17-ից սեպտեմբերի 1-ը ներառյալ:

2. ***Անահիտ Բադալյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բժիշկ ***Գայանե Խաչատրյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 10**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 օգոստոսի 2026 թվականի № 318-Ա**

## ՀԵՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, հիմք ընդունելով *Հերմինե Ղազարյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 7-ի № 26.63 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Հերմինե Ղազարյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 13-ից 26-ը ներառյալ:

2. ***Հերմինե Ղազարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Նինել Սահակյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 10
ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 օգոստոսի 2026 թվականի № 321-Ա**

## ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2025 թվականի դեկտեմբերի 30 -ի № 524-Ա որոշումը և *Սուսաննա Սահակյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 7-ի № 15 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սուսաննա Սահակյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 11-ի սեպտեմբերի 7-ը ներառյալ:

2. ***Սուսաննա Սահակյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Յողիկ Մկրտչյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 10**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 օգոստոսի 2026 թվականի № 322-Ա**

## ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Լուսինե Գալստյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 12-ի № 4 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Լուսինե Գալստյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ վեց աշխատանքային օր և 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից չորս աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 14-ից 27-ը ներառյալ:

2. ***Լուսինե Գալստյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Եթեր Թադևոսյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ ***Եթեր Թադևոսյանին*** և «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անուշ Զաքարյանին*** ապահովել «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Անուշ Զաքարյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 13
ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 օգոստոսի 2026 թվականի № 323-Ա**

## ԱՆԻ ՄԱԴԱԹՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Անի Մադաթյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 13-ի № 63 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անի Մադաթյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2026 թվականի օգոստոսի 28-ին՝ մեկ օր:

2. ***Անի Մադաթյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի տեղակալ ***Թեհմինե Սահակյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 14**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 օգոստոսի 2026 թվականի № 324-Ա**

## ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Կարինե Հովսեփյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի № 53/26 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Կարինե Հովսեփյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից 16-ը ներառյալ:

2. ***Կարինե Հովսեփյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Սոնա Ասատրյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 17**
**ք. Հրազդան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 օգոստոսի 2026 թվականի № 325-Ա**

### ՕՖԵԼՅԱ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Օֆելյա Թորոսյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 14-ի № 15 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Օֆելյա Թորոսյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից երեք աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 21-ից 25-ը ներառյալ:

2. ***Օֆելյա Թորոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Լաուրա Արմենակյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 17**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 օգոստոսի 2026 թվականի № 326-Ա**

**ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 9-րդ մասերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի 2026 թվականի օգոստոսի 18-ի № 20-026 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Վարդան Վարդանյանի***՝ վարժական հավաքներին 2026 թվականի օգոստոսի 19-ից սեպտեմբերի 11-ը ներառյալ՝ 24 օր մասնակցելու պատճառով կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Սուսաննա Նիկողոսյանի*** վրա:

2. ***Վարդան Վարդանյանի*** վարձատրությունը նշված ժամանակահատվածի համար իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 18**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 օգոստոսի 2026 թվականի № 327-Ա**

## ԺԱՆԵՏԱ ՇԱՐՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՀՐԱԶԴԱՆԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի և հիմք ընդունելով *Ժանետա Շարոյանի* 2026 թվականի օգոստոսի 13-ի № 30 դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Ժանետա Ֆրունզեի Շարոյանին*** 2026 թվականի օգոստոսի 20-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան № 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի հունվարի 26-ին կնքված № 157 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան № 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ ***Արփա Անուշավանի Սրեփանյանին*** և վարձատրել հաստիքացուցակով տնօրենի համար հաստատված դրույքաչափին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան № 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 19**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 օգոստոսի 2026 թվականի № 328-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի № 315-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի օգոստոսի 7-ի № 315-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 20-ի № Ն/1058-2026 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի օգոստոսի 7-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներում աջակցության ծրագրով պարարտանյութերի ձեռքբերման փաստաթղթերի ընտրանքային մոնիթորինգ իրականացնող աշխատանքային խումբ ստեղծելու մասին»* № 315-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետի ***«21»*** թիվը փոփոխել ***«31»*** թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 20**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

---

**24 օգոստոսի 2026 թվականի № 329-Ա**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և «Տարածքային կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակչի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով մեկ քաղաքացու հատկացնել՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն՝ հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 24**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2026 թվականի օգոստոսի 24-ի № 329-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| Հ/հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Նարինե Սահակյան | Արարատի մարզ, Արտաշատ համայնք | 100 000 | |
| Ընդամենը | | | 100 000 | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 օգոստոսի 2026 թվականի № 330-Ա**

## ՍՏԵՓԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԻԻ ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի և հիմք ընդունելով *Ստեփան Գևորգյանի* 2026 թվականի օգոստոսի 21-ի № 49 դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Ստեփան Վահրամի Գևորգյանին*** 2026 թվականի օգոստոսի 24-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գառնիի Արթուր Հակոբյանի անվան № 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված № 150 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գառնիի Արթուր Հակոբյանի անվան № 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Խսկուհի Միշայի Աբրահամյանին*** և վարձատրել հաստիքացուցակով տնօրենի համար հաստատված դրույքաչափին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գառնիի Արթուր Հակոբյանի անվան № 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 24**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 օգոստոսի 2026 թվականի № 331-Ա**

## ԱՆԺԵԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և հիմք ընդունելով *Անժելա Պետրոսյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 21-ի № 76 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Անժելա Պետրոսյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ից 28-ը ներառյալ:

2. ***Անժելա Պետրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Նարինե Մելքոնյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 24**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 օգոստոսի 2026 թվականի № 332-Ա**

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Հարություն Գրիգորյանի*՝ 2026 թվականի օգոստոսի 24-ի № 95 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Հարություն Գրիգորյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2026 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 2-ը ներառյալ:

2. ***Հարություն Գրիգորյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Լուիզա Սիմոնյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**
**(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 25**
**ք. Հրազդան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**25 օգոստոսի 2026 թվականի № 333-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Պարոնյանի անվան № 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2026 թվականի օգոստոսի 24-ի № 12 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 2-րդ կետում ***«Անի Սարգսյան»*** բառերը փոխարինել *«Ավետիք Հովհաննիսյան»* բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Պարոնյանի անվան № 12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 25**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 օգոստոսի 2026 թվականի № 334-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի նոյեմբերի 28-ի № 3273-Ա հրամանը և 2025 թվականի դեկտեմբերի 4-ի № ԴԽ/20.2/41798-2025 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2026 թվականի երրորդ եռամսյակում* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի *«Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի № 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»* № 03-Ն հրամանով հաստատված՝ իրավական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, մեկամսյա ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 27**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2026 թվականի օգոստոսի 27-ի № 334-Ա որոշման

## 2026 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| Հ/հ | Համայնքի անվանումը | Ժամանակահատվածը | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|
| | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Ազգանուն, անուն |
| 1 | 2 | 3 | 5 | 6 |
| 1 | Չարենցավան | սեպտեմբեր 2023-սեպտեմբեր 2026 | ղեկավար՝<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ<br>անդամներ՝<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ<br>-ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>-ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ | *Ալեքսանյան Հարություն*<br><br>*Գասպրյան Մայրանուշ*<br><br>*Ստեփանյան Համլետ*<br><br>*Վարդանյան Հրաչյա*<br><br>*Հակոբյան Արթուր*<br><br>*Ավետիսյան Գուրգեն*<br><br>*Խաչատրյան Հարություն*<br><br>*Առաքելյան Շավարշ* |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**27 օգոստոսի 2026 թվականի № 335-Ա**

### ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, հիմք ընդունելով *Լևոն Պետրոսյանի* 2026 թվականի օգոստոսի 26-ի № Ն/1075-2026 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ հինգ աշխատանքային օր և լրացուցիչ արձակուրդը՝ չորս աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ից 17-ը ներառյալ:

2. ***Լևոն Պետրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ ***Վահագն Նազլոյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի օգոստոսի 27**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2026 թվականի № 336-Ա**

## ԹԵՀՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի և հիմք ընդունելով *Թեհմինե Սարգսյանի* 2026 թվականի օգոստոսի 28-ի № Ն/1084-2026 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական ***Թեհմինե Սարգսյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից 16-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**2026 թվականի օգոստոսի 28**
**ք. Հրազդան**